ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի դեկտեմբերի 27-ից 2024 թվականի ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում փորձագետի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Ես՝ Սուսաննա Ստեփանի Հովհաննիսյանս, 2023թ.դեկտեմբերի 27-ից ներգրավվել եմ Նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչությունում որպես փորձագետ:

Ներկայացնում եմ հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից իրականացված աշխատանքները.

1) «Մալբերի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով առցանց եղանակով հաշվետու ժամանակահատվածում սնանկության դատարանից ստացված որոշումների և պահանջագրերի մուտքագրում,
2) հսկողության իրականացում Վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականների ժամկետներում և պատշաճ կատարման նկատմամբ,հանձնարարականների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում դրանց կատարող հանդիսացող ստորաբաժանումներին՝ տեղեկատվության անճշտության բացառման նպատակով,
3) սահմանված կարգով և ժամկետներում առցանց և թղթային եղանակով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ստացվող գրությունների, իրավական ակտերի, հարցումների, դիմումների մուտքագրում «Մալբերի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ,
4) էլեկտրոնային և թղթային եղանակով Նախարարության մուտքագրված և ելքագրվող գրությունների հսկողության իրականացում՝ փաստաթղթերի սահմանված ժամկետում գրանցում, գործավարության կարգին չհամապատասխանող գրությունների մուտքագրման բացառում համակարգում, ելից գրությունների առաքում նույն օրը, առաքվող փաստաթղթերի ռեեստրների վարում:

Սուսաննա Հովհաննիսյան

23.04.2024թ.